

<p>Հաստատված է</p> <p>«ԱՐՌԱ Քրեղիտ Ռեփորթինգ» ՓԲ ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովում</p> <p>24 դեկտեմբերի 2010թ.</p> <p>Արձանագրություն թիվ 24/12</p>	<p>Տպագրված է ընդամենը 5 օրինակ</p> <p>Օրինակ - 2</p> <p>Գրանցված է 22 իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից 12.04.2006թ.:</p> <p>Գրանցման թիվ 286.120.06038</p> <p>Վկայական 03 Ա 071442</p> <p>Թիվ 2862 փոփոխությունը գրանցված է 22 իրավաբանական անձանց պետական ռեգիստրի <u>Կենտրոնի</u> տարածքային բաժնի կողմից 26.02.2011թ.</p>
	

«ԱՐՌԱ Քրեղիտ Ռեփորթինգ»

փակ բաժնետիրական ընկերության

կանոնադրության փոփոխություն և լրացում

Երևան 2011

1. «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 5.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« 5.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ անվանական բաժնետոմսի անվանական արժեքը 8,475 /ուր հազար չորս հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ է: Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանվում է 200,204,925 /երկու հարյուր միլիոն երկու հարյուր չորս հազար ինը հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ, որը կազմում է Ընկերության կողմից տեղաբաշխված 23,623 /քսաներեք հազար վեց հարյուր քսաներեք/ հատ բաժնետոմսերի դիմաց վճարված դրանց անվանական արժեքի հանրագումարը»:

2. «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 9.2.3. ենթակետի վերջում ավելացնել հետևյալ բովանդակությամբ երկու նոր նախադասություն՝

«Ընկերության տնօրենի տեղակալի նշանակումը, աշխատանքից ազատումը, վարձատրության չափի հաստատումը և փոփոխումը՝ Ընկերության տնօրենի ներկայացմամբ և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Տնօրենի բացակայության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է տնօրենի տեղակալը»:

Սույն փոփոխությունը և լրացումը կազմում են 06.02.2008թ. գրանցված «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը: